# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Եղիշե Չարենցի <<Էպիքական լուսաբաց>> ժողովածուն

Ուսուցիչ՝ Վարսիկ Հովհաննիսյան

Խումբ՝ Հայոց լեզու և գրականություն

Խմբի ղեկավար՝ Լիլիթ Մարկոսյան

Եղեգնաձոր

2022

# Բովանդակություն

1.Ներածություն----------2

2.Ե. Չարենցի կենսագրությունը----------3

3.Ե.Չարենցի ստեղծագործությունը----------4

4.<<Էպիքական լուսաբաց՝>> ժողովածուն----------4

4.1 Մաքառման ճանապարհին----------5

4.2 Անցյալի մշուշից ծնված լուսավոր Հայաստանի ապագան----------10

5.Եզրակացություն----------13

6.Գրականության ցանկ----------14

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իմ հետազոտական աշխատանքի թեման է Եղիշե Չարենցի «Էպիքական լուսաբաց» ժողովածուն: Թեմայի ընտրության հարցում նկատի եմ ունեցել այն,որ թեման ոչ միայն ծավալուն է և բովանդակալից, նաև ունի արդիականություն:

Չարենցը դարձավ հավերժական միայն 1953 թվականից հետո,միևնույն ժամանակ եղավ հայտնություն, երբ Ն. Աղբալյանը իր զեկույցում հայտարարեց ,որ ծնվել է մի տաղանդավոր բանաստեղծ: Չարենցը ծնվել է 1897թ.,բայց յուրաքանչյուր ժամանակաշրջանում գրողը նորից ու նորից վերածնվում է՝դառնալով պայքարի, հեղափոխության և ազատության խորհրդանիշ: Այդ առումով շատ արդիական է «Էպիքական լուսաբաց» շարքը, որտեղ ընդգծված գաղափարները մեր օրերի համար է և իզուր չէ, որ ժողովածուն ծրագրային է և հանդիսանում է սկիզբ «Գիրք ճանապարհի» ժողովածուի համար:

Համարյա ոչինչ չի փոխվել, բացի ժամանակաշրջանից և ժամանակից, որն իր ընթացքի մեջ է առել գրողի գաղափարները, քանի որ ժողովածուն փոքր ինչ նաև քիչ է ուսումնասիրված փորձել եմ կրկին վեր հանել գրողի ապրած ժամանակաշրջանի խոհերն ու գաղափարները և դնել մերօրյա ժամանակների հարթակի վրա:

# Ե.ՉԱՐԵՆՑԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Եղիշե Աբգարի Սողոմոնյանը ծնվել է Կարս քաղաքում,1897թվականի մարտի 13-ին:Նրա ընտանիքը Կարս էր եկել Պարսկաստանի Մակու քաղաքից:Ընտանիքում 4 տղա էին,3 դուստր:Նախնական կրթություն է ստացել Կարսի հայկական դպրոցներից մեկում ,իսկ մինչ այդ գրաչանաչություն է սովորել հորից: Այնուհետև ուսումը շարունակել է Կարսի ռեալական դպրոցում՝ սովորելով 4 տարի:Ուսումնարանից հեռացել է ՝կրթությունը կիսատ թողած:1914 թվականին սկսվում է համաշխարհային պատերազմը և անարձագանք չի մնում հայկական շրջաններում:

1915թվականին 18- ամյա պատանին իբրև սանիտար հայկական 7-րդ կամավորական ջոկատի կազմում,մասնակցում է կռիվներին և հասնում Վան:

1916 թվականին Չարենցը գնում է Մոսկվա ՝ կրթությունը շարունակելու նպատակով:Բայց այնտեղ էլ է անավարտ թողնում կրթությունը:Հեղափոխական իրադարձություններով տարված՝արդեն իսկ գրական ճանապարհ անցած,22-ամյա Չարենցը 1919 թվականին վերադառնում է Կարս և անցնում աշխատանքի Բաշքյադիկլար գյուղում ՝որպես ուսուցիչ:Եվ ահա այդ ժամանակ էլ գրաքննադաը Ն. Աղբալյանը հայտարարում է ,որ ծնվել է մի նոր բանաստեղծ:

1919թվականին Չարենցը գալիս է Երևան և հանդիպում Ն.Աղբալյանին: 1920թվականի հունվարի մեկից նշանակվում է նախարարության հատուկ հանձնարարությունների կոմիսար:Բայց մի քանի ամիս անց հեռանում է պաշտոնից և գնում աշխատելու ամերիկյան որբանոցում է իբրև ուսուցիչ ու դաստիարակ:Այնուհետ նա դառնում է Լուսավորության նախարարության արվեստի բաժնի վարիչ:

1921թվականին Չարենցը մեկնում է Մոսկվա արդեն ՝կնոջ Արփիկ Տեր- Աստվածատրյանի հետ և ընդունվում Արևելքի աշխատավորների կոմունիստական համալսարան:

1924-1925թթ Ալ. Մյասնիկյանի օժանդակությամբ Չարենցը մեկնում է արտասահմանյան ուղևորության :Նա շրջում է Եվրոպայի մի շարք երկրներում:1927թվականին մահանում է Չարենցի կինը՝ Արփիկը: Գրողը շատ ծանր է տանում սիրելի կնոջ մահը բայց կարողանում է մեծ ջանքերի շնորհիվ հաղթահարել ամեն ինչ:

1931թվականին Չարենցն ամուսնանում է Իզաբելլա Կոդաբաշյանի հետ:Սակայն հետագայում բանաստեղծին բանտարկում են և օրեր շարունակ անօգնական ու անգիտակից մնալուց հետո , բանտի հիվանդանոցում մահանում է 1937թ. նոյեմբերի 29-ին:Բանաստեղծի հավերժական կյանքն սկսվում է 1953թվականից հետո միայն:

# ՉԱՐԵՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ե. Չարենցի առաջին բանաստեղծությունը տպագրվել է <<Պատանի>> ալմանախում՝ 1912 թ. <<Ծաղիկները հեզ թեքվում են քամու օրորի տակին>>:

1914 թվականին լույս է տեսնում <<բեք երգ տխրադալուկ աղջկան>> բանաստեղծությունների ժողովածուն՝ Կարսում:Նրան հաջորդում են,,Հրո երկիր,, ,,Տեսիլաժամեր,, / ,,Լիրիկական բալլադներ,,/ ,,Ծիածան ,, շարքերը:

1916թ. ,,Դանթեական առասպել ,, պոեմն է լույս տեսնում:

1915թ.<<Կապուտաչյա հայրենիք>> պոեմը,իսկ արդեն 1918-ին <<Սոմա>>1919թ.,<<Ամբոխները խելագարված>>պոեմները:

1918-1921թթ Չարենցը գրում է<<Ողջակիզվող կրակ>>,<<Էմալե պրոֆիլը ձեր>>,,<<Փողոցային պչրուհուն>>, <<Ութնյակներ արևին>> բանաստեղծական շարքերը:

1926 թվականին գրողը հրատարակում է <<Երկիր նաիրի >> վեպը:

1930 թվին լույս է տեսնում <<Էպիքական լուսաբաց >> ժողովածուն

1934 թվականին լույս է տեսնում վերջին ժողովածուն՝ <<Գիրք ճանապարհի>>:

## Մաքառման ճանապարհին

1930 թվականի հունվարին լույս է տեսնում Ե. Չարենցի <<Էպիքական լուսաբաց>>ժողովածուն:Գիրքը հրատարկվում է հետևյալ ընծայագրով:

,,Նվիրում եմ այս գիրքս հիշատակին կնոջս,ընկերոջս,հերոսական բարեկամիս՝Արփենիկ Չարենցի Աստվածատրյան:Նա վախճանված էր 1927թվականի հունվարի 1-2-ի գիշերը՝Երևանի առաջին հիվանդանոցում:1

Հետագայում 1932թվականին գրողը,,Մուսայիս,,բանաստեղծությունը ավելացնում է ,,Էպիքական լուսաբաց,, ժողովածուի մեջ՝ ամենասկզբում:

Ե.Չարենցի ստեղծագործությունները բազմիցս ուսումնասիրվել են ,քննարկվել վերլուծաբանների գրականագետների կողմից:ժողովածուները վերլուծել են և ամեն մեկն իր ուրույն մոտեցումն է ցուցաբերել հանճարի ստեղծագործությունների վերաբերյալ:Քանի որ Չարենցը հայտնություն էր ,տաղանդավոր ու առեղծվածային,միևնույն ժամանակ պարզ,մաքուր,խճճված,ըմբոստ:Նրա ստեղծագործություններում գրեթե միշտ զգացվում է անկախ,հախուռն ,անհանգիստ գրողի հոգեվիճակը:Նրա կյանքը մաքառում է պայքար,որի արդյունքում ծնվել են տաղանդավոր և հրաշալի բանաստեղծական շարքերն ու ժողովածուները:Իր յուրահատուկ բանաստեղծություններով,ծրագրային ու չափախո նովելներով առանձնանում է վերոնշյալ ժողովածուն:Այն կարելի է կիսել երկու թեմատիկայի՝բանաստեղծի խոհերն ու հուզական ապրումներն ընդգրկող ճանապարհ՝պայքարի և մաքառման և գրեթե միշտ հեղինակի գործերում նկատելի Հայաստանի պատկերը,լուսավոր ապագայի տեսլականը:

Անդրադառնալով 1-ին մասին,նշենք որ ,,Մուսայիս,, բանաստեղծությունը ժողովածուի սկզբում ավելացրել է հեղինակը կնոջ մահվանից հետո և հենց այս գործում էլ նկատելի ներկայի ցավագին ապրումը ու ապագայի համար մղվող պայքարի շեփորը:

Հառնեցիր հանկարծ վիթխարի թափով,

Դու շռնդաքլից այգին ընդառաջ,

Լցված հողմային օրերի տապով,

Կանգնեցին՝ ձեռքիդ պայքարի

Եվ դարձար այնքան նոր ու անճանանչ:2

1.Ոչ մի շաբաթ առանց Չարենցի,Երևան,Զանգակ,2022թ. էջ1

2.Եղիշե Չարենց,երկերի ժողովածու,4հատորով,հատոր2,Երևան,1986,էջ 254

Հեղինակին զարմացնում են բարիկադներում կռվող ,մարտիրոսաբար մարտնչող կանայք, որոնք այնքան ջահել են, երիտասարդ,խնդուն,փոթորկվող,հողմերի մեջ կարծես

թե նրանց արյունն է եռում:Այդ ամենից հետո անմիջապես ծնվում է երգը,որտեղ էլ հեղինակը գրում է .

Դու նզովեցիր օրերը քո հին,

Այնքան անկրակ ու մեռած այնքան,

Եվ գնդերի հետ ելար գրոհի,

Որպես մի կարմիր ամազոնուհի,

Դու շեփորեցիր կռիվ ու պայքար:/3

Ի սկզբանե այն,որ այս գործում կա հատված ,որտեղ նշված է ժողովածուի անմիջական անունը կրող բառ:Երբ նայում ես բառարանը /4,,էպիքական ,, բառը փոխաբերական իմաստով նշանակում է 1.վեհ,վեհապանծ/2.հերոսական,դյուցազնական:Ըստ այդմ տեսնում ենք զուգահեռներ հետևյալ հատվածում.

Ինչ իմանայի օրերեում ես այն,

Որ այնքան անկյանք քո երակներում,

Բարիկադների հրերում անանց,

Մարտիրոսաբար մարտնչող կանանց

Բորբ հերոսական արյունն է եռում:/4

Ու ահա այստեղ էլ նույն պայքարն է ,կյանքի ,մահվան, ապագայի համար:Հեղինակը նաև իր ցավն ու մտորումներն է արտացոլում մուսայի անվանաստվերում:

Ապագայի վառ տեսլականը ,որտեղ սակայն թախիծը չի մեռնում ,այլ լցնում է ապագաի անիվը…

Որ բացվես պիտի օրերեում դու նոր,

Ինչպես ծաղիկն է արևից բացվում,

Որ քո քնարի երգերը բոլոր,

Այն դժնի ,խեղդող ու աղետավոր

Օրերից են լոկ թախիծով լցվում:5

3.նույն տեղում՝էջ 254
4.Bararan onlayn Re Armenia
5.Նույն տեղում՝էջ 204

Հակասություններն ինքնին բացահայտում են խորը հոգեվիճակ,ծանր ապրումների անհայտ ուղի:Մշուշոտ ճանապարհը տանում է ապագա՝հեռվից պայծառ ու լուսավոր,թախիծով ու տրտմությամբ և որն անցնում են միայն չարչարանքի գնով,քանզի պայքարը հենց մարդու համար է ու մաքառման ճանապարհին ճամփորդի նման ուղիներով բարձրանում ես վեր անհաս բարձրություններ,որտեղ էլ չարչարում են քեզ՝քսելով երեսդ քարերին մերկ:

Տարել է ուղին քո խորդուբորդ,

Քեզ դեպի քո անհաս բարձրություններ

Եվ անձրևն է մերթ քեզ թրջել հորդ

Եվ երկինքն է մերթ գլխիդ ձյունել,

Քսել երեսդ քարերեին մերկ:

Ու չարչարել են քեզ չարաչար,

Բայց կրկին,կրկին ձգտել ես վեր:6

Այս պայքարում հերոսը կարողանում է պատասխան տալ թշնամիներին,որի վառ արտահայտումն է ,,Ես այլևս այն չեմ,, բանաստեղծությունը:Նա արդեն հասկացել է մի պարզ բան,որ ոչ մի արդյունքի չի հասնի միայն երգերով և պարզապես պետք է հրաժարվել զգացմունքների հորձանքից ու պարուրվել աշխատանքի բոցով:Նա խոստանում է ինքն իրեն այլևս շառաչուն երգեր գալիքի մասին չերգել:Բայց նորից ի հայտ է գալիս հակասությունը,այն որ այդ ամենի արդյունքում իր ներսում գնդերի նման կուտակվում են խոհերը:Առջևում աղմկում է ներկան,գալիքը, և քնարական հերոսը ճամփա է ընկնում մենակ իր քնարի հետ միասին:Նորից ըմբոստանում է հոգին,ծառանում է պայքարի ոգին,ամրանում է կամքը ու երգում է նա,անդադար երգում:

5.Նույն տեղում,էջ 204.

6.Նույն տեղում է 254

Բայց պինդ է հոգիս,ու ոչ մի ժանիք,

Ինձ չի բաժանի իմ անցյալ դարից,

Ինչպես ոչ մի ուժ ինձ չի բաժանի,

Իմ շոնդալից պայծառ քնարից:7

Իսկ քնարը երգում է երգում,երգում անցյալի ներկայի ,ապագայի մասին:Երգում է Արփենիկի՝ հերոսական կնոջ,բարեկամի ,ընկերոջ մասին:

Չի մեռնում ոչինչ, ո՛չ անցյալի,ո՛չ ներկան:Ներկան,որտեղ ափսոսանքով նրանք ճանապարհ են դնում դագաղը՝քարանալով ռազմի պահակի նման,բայց…..

Եվ խառնելով արդեն կերպարանքը նրա,

Հուրհրատում էր գալիքի հրդեհների հրով,

Արնանման ինչպես հաղթանակի դրոշ:8

Քնարական հերոսը կարծես թե տեսնում է ապագան,զգում իր հետ կատարվելիքը,և մտքի սլացքով թռչելով տեսնում լույսը,պայծառ գալիքը:Բայց մինչ ապագա հասնելը նաև անդրադառնանք նաև չափածո նովելներին:Առանձնահատուկ այուժե ունի ,,Homo-Sapies,,ստեղծագործությունը:Հերոսը 16 տարեկան մի տղա ,ով գունատ է ,միջահասակ,նաիրյան ,քայլում է քաղաքով:Նա հանելուկ է իր հոր համար ու բավականին անտարբեր շրջապատին:Մտքերի շարանները շփոթեցնում են նրան :Իր շուրջը պարուրող խաղաղությունը ստիպում է գնալ այգի,որ այնտեղ կարդա այս գիրքը՝,,Homo -Sapies,,:Այդ գրքի էջերից ասես ցնորքներ են են թափվում և նա մոռանում է աշխարհը ՝տեսնելով մի անեզրական կարոտ՝ Էլբրուսը:

Շառաչում են շանթերը և այդ շանթերի մեջ մի հանճարեղ աղջիկ:Իսկ ո՞վ է նա ,Նվարդ,թե՞ Արփենիկ,մենք չգիտենք ,բայց պատանին այդ հետո դառնում է պոետ ու գրում այս նովելը,որ մենք կարդանք:Այս ստեղծագործությանը հաջորդում է մի այլ հրաշալի գործ,որն ապագայի տեսլականն է և զուր չէ որ հեղինակը զգում է իր՝ ապագայում գերեզման չունենալը:Բայց հանճարի անհայտությունը երկար չի տևում:Մի Գանգրահեր տղա կգտնի ու կկարդա այս տողերը:

7.Նույն տեղում,էջ 2548

8.Նույն տեղում ,էջ264

Հետո կարծրացած փոշին է քերում,

Նա մի հին քարի վրայից ահա ,

Նայում է ապա նա փոշոտ քարին,

Աղեղանման հոնքերի տակով,

Գրված է վրան Եղիշե Չարենց,

Բանաստեղծ ծնված Մակու քաղաքում:/9

Որին էլ անմիջապես հաջորդում է պայծառ ապագայում քայլող լույսը՝ գանգրահեր, ոսկեհեր մանուկը:

Լսու՞մ ես այդտեղ իմ սիրտն է թաղած,

Կոխոտիր նրան քայլերով քո լույս,

Օ՛,դու գալիքի գանգրահեր տղա ,

Մեր լավ գալիքի ոսկեհեր մանուկ:10

Չարենցի,, էպիքական լուսաբաց,, ժողովածուի գրեթե բոլոր ստեղծագործությունները իրենց մեջ կրում են Չարենցի վերլուծական և խոհական ուժը:Ծրագրային բանաստեղծություններում զգացվում է բանաստեղծ քաղաքացու ,դժվարություններ ,պայքար ,վերելք ,անկում տեսած մարդու կյանքն ու կերպարը:Եվ իզուր չէ, որ Հ.Թամրազյանն ասում է, որ դա սոսկ հերթական հաջողություն չէր ,այլ այն հազվագյուտ գրքերից ,որոնք հանգուցային դեր են խաղում ,հաջորդականության մեջ դառնում սկիզբ ,Բացում նոր հորիզոն:

Արվեստի այս նոր փիլիսոփայությունը հատուկ խորհուրդ է ստանում էպիքական հյուսվածքներով և մտահղացումներով:Բանաստեղծի հորիզոնում երևում է հայ պոեզիայի ամբողջականությունը: Չարենցը գնում է դեպի ընկալման և արտացոլման ներքին շարժումը,բարդությունները,հորիզոնները և փորձում հայտնաբերել մեծ առօրյայի բանաստեղծությունը: Իսկ մենք շատ ենք քննարկում Հայաստանի կերպարը նոր ծրագրի հեռապատկերի վրա: Նաև կարելի է ուշադրություն դարձնել հեղինակի հոգոբանական առանձնահատկությունների դրսևորման վրա: Հ.Թամրազյանը նշում է ,որ ծրագրային բանաստեղծության մեջ հսկայական չափով մեծանում է անհատի և հասարակության ներքին աղերսը:

9.նույն տեղում էջ 293
10.նույն տեղում էջ 293

,բանաստեղծի անսովոր զգայուն և առողջ վերաբերմունքը դեպի դարաշրջանը,դասակարգը և մարդը, ուստի հեռանկարների ուժեղ զգացողություն կա գալիքի և ներկայի առջև:Հենց ա՛յ դրանում էլ կայանում է բանաստեղծի հանճարը և այս ժողովածուի առավելությունը: Այս ժողովածուն ծրագրային է,միևնույն ժամանակ պարզ ,մաքուր ,զուլալ,զգացմունքային, անձնական,բանաստեղծական հայրենասիրական և ամենակարևորը ապագայի տեսլական:

# ԱՆՑՅԱԼԻ ՄՇՈՒՇԻՑ ԾՆՎԱԾ

# ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ

Երբ ընթերցում ես Ե.Չարենցի գործերը,սկսում ուսումնասիրել խորությամբ,ակնհայտ է դառնում մի պարզ բան,համարյա բոլոր գործերում անտեսանելի ,բարակ թելի նման անցնում է հայրենի երկրի `Հայաստանի վառ ապագայի գաղափարն ու տեսլականը:Գրողն ամբողջ էությամբ սիրահարված է հայրենի հողին երկրին,նահիրյանին,Մասիսին,և ինչպես ինքն է ասում իր Հայաստան յարն է սիրում: Չարենցի սերը հայրենիքի նկատմամբ սկսվում է ,,Ես իմ անուշ Հայաստանի ,,՝բանաստեղծությունից: Դեռև 1918 թվականին նա մասնակցում է ընթացող ինքնապաշտպանական մարտերին կամավոր, իսկ այնուհետ գրում <<Սոման>>, <<Կապուտաչյա հայրենիք>>. և <<Դանթեական առասպելը>>: Ակնհայտ ցույց տալով իր բոցավառ սերն ու շունչը հայրենիքի նկատմամբ: Չարենցը միշտ էլ տեսել է Հայաստանի ապագայի տեսլականը և տարբեր գործերում արել հղումներ ու հուշումներ:Այդ ամենն աննկատ անցնում է նաև <<Էպիքական լուսաբաց>> ժողովածուի ստեղծագործություններում:Վերջնականապես տեսքի բերվում ,,՝Գանգրահեր տղան,,չափածո նովելում: Հայաստանի ամբողջական պատկերն արտացոլվում է հատկապես էպիկական առումով ,,Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում ,,չափածո նովելում:Այն անցյալի և ներկայի միաձուլումն է ,որտեղ ներկայացվում ` Միքայել Նալբանդյանի կերպարը: Այստեղ կա և՛ ազատագրական պայքար և՛ հայ մարդու , ասպետի կյանքի և ստեղծագործական աշխարհի մասին: Բայց այս ամենին զուգահեռ կա նաև ջերմություն,մարդկային վեհ հատկանիշներ,իմաստություն և քաջություն :Ազգային հպարտության զգացումը պարուրում է հերոսին, միժամանակ կերպարը ստանում է խորը պատմականություն:Այստեղ ևս կա ազգային երգը,Ազատության պայքարը, ըմբոստությունը, համամարդկային զգացումները,և բանաստեղծությունը ևս ստանում է սրտառուչ երանգ:

,,Առաջին գլխի հատվածներում խոսքը գնում է քաղաքական խառը մթնոլորտի ,մայիսյան դեպքերի Ալավերդյանի արտասանած ճառի մասին: Երկրորդ գլխի հատվածներում պարզ ակնարկներ կան թուրքերի հարձակման և դաշնակցական կառավարության անճարակության մասին:Երրորդ գլուխը նվիրված է փետրվարյան դեպքերին,քանի որ նկարագրված են մերոնց նահանջը և կարմիր զինկոմի քաջարի արարքը/:12

Ահա և այստեղից էլ գալիս է այն աշխատանքը տենդագին, որ արել է Չարենցը պոեմի վրա: Ընդհանուր խոսքի փոխարեն կանգնում է կենդանի կերպարը ,նրա արթնացած ազգային հպարտության զգացումը: Անցում կատարելով մյուս գրողին ` Ակսել Բակունցին նվիրված գործին,պետք ե նշենք այն ,որ մեծ ուշադրություն է գրավում այս բանաստեղծությունը որ նվիրված է գրական ընկերոջը :Բակունցին նվիրված երգը այնքան հարազատ բարեկամին, հնչում է որպես մեծ ճանապարհի հավերժական խորհուրդ: Չարենցն այս գործում նկարագրում է իր մտորումները,ապրումները,զգացվում է նուրբ ու հարուստ կենսական լիցքերով արձակ, որտեղ անքակտելի կապով կապնված են երկու գրող-մտավորականները:

/Երգի մեջ-գտնում է Չարենցը,-պետք է արտացոլվի կյանքի խստությունը,խորությունը,վեհությունը և լրջությունը:/13

/Էպիկական Լուսաբացում/ զգացվում է պուշկինյան ելևէջներ նաև:Նրա մեռած պոետին՝ Վահան Տերյանին նվիրված տողերում զգացվում է Հայնեի ,Գյոթեի մոտիվները,ինչպես նար մեծ դերակատարում ունի Թոմանյանի ստեղծագործական ճանապարհը:Այդ ամենի մեջ ամեկարևորն այն է ,որ ամեն դեպքում ակնհայտ է ,որ Չարենցի այս ժողովածուն հագեցած է ծրագրային ստեղծագործություններով:Առանցքային դերակատարում ունի,,Մեծ առօրյան ,,ստեղծագործությունը:Այստեղ գրողը կատարում է բացահայտումներ առօրյայի թոհոբոհի մեջ , պատկերում փոքրիկ մարդու մի օր՝ լեցուն հոգեկան ապրումներով,հրապույրներով,անտարբերությունով ,դժգոհությունով,առհասարակ առօրյայով:

Հայաստան անունը չի շոշափվում,գրեթե բոլոր գործերում, բայց պայքարի երգը,գալիքը,վառ ապագան ,բոցաշունչ խոսքերը,մաքառումը,տարիների սպասումները,խոհերն ու մտորումները խոսում են այդ մասին,իսկ հայրենիքի կերպարն ակնհայտ է այս տողերում.

Փակում եմ հոգնած աչքերս մի պահ

Եվ տեսնում եմ ես այնքան այնքան պարզ

Գալիք մի զարուն վառ մի օր ահա

Երկինքը կապույտ,օրը հրավարս….

Ու կապույտ,կապույտ,կապույտ երկնքից

Թափում է կարծես երգ ու խնդություն

Ոլորապտույտ ձգվում է շոռսեն

Նոր Երևանից դեպի Արարատ:11

11.Նույն տեղում՝ էջ 293

12.հրանտ Թամրազյան.Եղիշե Չարենց.Արևիկ ,Երևան ,էջ 658.

12.Նույն տեղում,էջ368.

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ի մի բերելով ,,էպիքական լուսաբաց,, ժողովածուի գործերը ,գալիս են այն եզրահանգման որ նախ գրողն իր խոհերն ու ապրումներն է արտացոլել գործերում,երկրորդ տեսնում է Հայաստանի ապագան՝ լավ ու լուսավոր ,որին պետք է հասնել միայն ու միայն պաքքարի ,մաքառման գնով:Կարծես թե ոչինչ չի փոխվել,երբ նայում ես մերօրյա իրադարձություններին,միայն մի բան է փոխվել ժամանակաշրջանը:Դպրոցական ծրագրերում Չարենցի այս ժողովածուի բանաստեղծություններից մի քանիսն է ներառված գրքերում,և հատկապես բարձր դասարաններում:Ըստ այդմ ես կնախընտրեմ դասերը ներկայացնել դասախոսության և զրույցի ձևով՝ նկարագրելով և ներկայացնելով այն նպակադրումները ,որոնք ծրագրային են և այդքան կարևոր հայերիս համար:Ընդհանուր առմամբ Չարենցի այս ժովովածուն հետաքրքիր է ու բովանդակալից:Նյութն ուսումնասիրելիս զգացվում էր գրողի հախուռն ,ըմբոստ ,պայքարող կերպարը:

Ինչպես նաև Չարենցի անձնական կյանքից հատվածներ՝ կնոջ մահվան հետ կապված, առանձնահատուկ տեղ էին գրավում բանաստեղծություններում: Հատկանշական է <<Մուսայիս>> բանաստեղծությունը:Ինչպես նաև առանցքային էին չափածո նովելները, Միքայել Նալբանդյանին ու Ակսել Բակունցին նվիրված գործերը:Ժողովածուն շատ ընդգրկուն է և հատկանշական այն փաստով ,որ ամեն մի գործի հետ կապված Չարենցը ծնվում է և դառնում հայտնություն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <<Ոչ մի շաբաթ առանց Չարենցի>>Երևան,Զանգակ, 2022թ.

2. Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, Հատոր 2, Երևան, <<Սովետական գրող>>1986

3. Հրանտ Թամրազյան, Եղիշե Չարենց,Երևան <<Արևիկ>>,1987,վերահրատարակություն.

4. Վ. Կիրկոսյան, Զ.Ավետիսյան Հայ գրականություն,Երևան ,2015.